

**ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՂՍ. ՊԱՐՄԱՄԵԱՆ ԵՒ
ԴԵՍՊԱՆ ՏՈՔԹ. ՄՈՎՍԷՍ ԱԲԷԼԵԱՆ
ՄԱՍՆԱԿՅԵՑԱՆ ՈՒՂԱՓՈՓԱՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ԱՂՕԹՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ**

Երեքշաբթի Նոկտեմբեր 9, 2001, յետ միջօրեի ժամը 6:00-ին՝ Մանհաթըն Նիւ Եորքի Ս. Երրորդութիւն Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ մէջ փրդի ունեցաւ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու մասնատր աղօթքի արարողութիւնը՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան շրջանակին համար: Այս արարողութիւնը կազմակերպուած էր Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Եպիսկոպոսներու Միացեալ Յանձնաժողովին կողմէ, որուն արեւնապետներն են Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Տիմիթրիոս արքեպս. Զանթոս:

Միացեալ Յանձնաժողովը կազմուած է փարի մը առաջ՝ գլխատր նպատակ ունենալով Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ զօրացնել համագործակցութիւնը, քաջալեր հանդիսանալ աշխարհի խաղաղութեան եւ իրարիասկացողութեան դապին եւ առիթ ընծայել Ուղղափառ Եկեղեցիներու ընդամենին, որպէսզի իրարու բաժնեկից դարձնեն իրենց կրօնական եւ մշակութային աւանդութիւնները:

Միացեալ Յանձնաժողովի առաջին նախաձեռնութիւնը եղաւ Նոկտեմբեր 9-ի արարողութիւնը, որուն հրաւիրուած էին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան այն ղեկավարները, որոնց ներկայացուցած երկիրներուն մէջ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ համայնքներ գոյութիւն ունին:

Յանձնաժողովը աշխատանք կը փանի, որպէսզի նման արարողութիւններ կազմակերպուին ամէն փարի. ծրագրուած է, որ յաջորդ փարուան արարողութիւնը փրդի ունենա Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ:

Մասնատր աղօթքի արարողութեան ներկայ էին նաեւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Միացեալ Նահանգաց ղեկավար Ծան Նեկրոփոնթէ եւ Նայասփանի Նարնապետութեան ղեկավար փոքթ. Մովսէս Աբելեան:

Այս խիստ փայտորիչ արարողութիւնը սկսաւ Յոյն եկեղեցականներու թափօրի մուտով՝ գլխատրութեամբ առաջնորդ Տիմիթրիոս արքեպիսկոպոսի: Դասին մէջ փրդ գրաւած էին Ուղղափառ Եկեղեցիներու զանազան բարձրաստիճան հոգեւորականներ, ինչպէս Միացեալ Յանձնաժողովի համաարեւնապետ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան եւ Արեւելեան թեմի թեմական պատրիարկ ու Միջեկեղեցական հարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիզէն եպս. Այգազեան:

Աղօթքներ մաքուցուեցան աշխարհի խաղաղութեան, Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, բոլոր հոգեւորականներուն, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ անոր պաշտօնեաններուն, համայն աշխարհի ժողովուրդին, ինչպէս նաեւ Սեպտեմբեր 11-ի ողբերգութենէն վերապրողներուն եւ անոնց ընտանիքներուն համար: Օրուան երգեցողութիւնը կարարեց Ս. Վլադիմիր Դպրեվանքի երգչախումբը:

Բարեգալստեան խօսքը արտասանեց Նայր Լեոնիպ Քիշքովսքի, որ արտայայտուելով Սեպտեմբեր 11-ի ցնցիչ պարահարին մասին՝ ըսաւ. «Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները կը հաւարան, որ շար կարեւոր է խաղաղ երկխօսութիւնը», եւ որպէս օրինակ յիշեց Մահմետական Սուրիոյ մէջ Ուղղափառ քրիստոնեաներու խաղաղ կեցութեան մասին: Ըսաւ նաեւ, որ նախկին համայնավար Նայասարանի մէջ Եկեղեցի կը բարգաւաճի եւ կը զօրանայ. իսկ Միացեալ Նահանգաց մէջ Ուղղափառ Եկեղեցիները «կենսունակ փոքրամասնութիւն» են:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Նայասարանի Նանրապետութեան լիազօր եւ մնայուն դեսպան Կոքթը. Մովսէս Աբելեան ըսաւ. «Մենք այսօրեղ հաւաքուած ենք խաղաղութեան եւ իրարհասկացողութեան ընթացք փալու համար, եւ ես կը կարծեմ, որ այս դարի հեքապնդման եւ միութեան համար ամենէն յարմար ժամանակը հիմա է: Անցեալ ամսուան ընթացքին ամբողջ աշխարհը իրազեկ եղաւ, որ մենք մուտք գործած ենք նոր շրջանի մը մէջ, որ մեզի կու փայ նոր պարտականութիւններ եւ նոր առաջնահերթութիւններ: Այսօր այսօրեղ գրնուող մեզմէ շարեր մեր ժողովուրդներու անցեալի վայրագ բռնագաղթի գոհերն ենք: Եւ սակայն, այսօր այսօրեղ կը գրնուինք որպէս ներկայացուցիչներ մեր ապրող ժողովուրդին ու կառավարութեան, եւ ապագային կը նայինք վառ յոյսերով: Յոյսի զանազան օրինակներու կարգին յիշեց պարկերը Տիմիթրիոս արքեպիսկոպոսին, որ Միացեալ Նահանգաց նախագահին եւ Նիւ Եորքի քաղաքապետին հեք կանգնած էր Սէլէնթ Նիքըլ Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ եւ Ջոյգ Աշտարակներու աւերակներու դիմաց, եւ ըսաւ. «Այդ պահուն կարծէք մենք ալ կանգնած էինք անոնց հեք, եւ մեզի վարահուած էր խիստ կարեւոր դեր մը՝ այս սարսափելի պարահարին յաջորդող շրջանին համար»: Ան յիշելով, որ Նայասարանի Նանրապետութիւնը նշեց իր անկախութեան փասնամեակը՝ ըսաւ. «Տակաին կը յիշեմ այն օրը, երբ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը ճանցցաւ մեր երկիրը, եւ անոր դրօշակը պարգուեցաւ ազգերու ընտանիքի անդամներու դրօշակներու կողքին: Նակառակ անոր, որ Նայասարան քաղաքապետը նոր Նանրապետութիւն մըն է, սակայն այս փարի ան ազգովին կը փօնախմբէ իր քրիստոնէացման 1700-ամեակը»:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Միացեալ Նահանգաց դեսպան Ճան Նեկրովոնթ արտայայտուեցաւ «պարերազմի սարսափելի ձգարուածութեան» մասին: «Միացեալ Նահանգները եւ իրենց կողմնակիցները երկու կարեւոր պարտականութիւններ կը հեքապնդեն՝ ինքնապաշտպանութեան եւ Մարդկային Իրաւանց համաշխարհային հօջակագրի իրաւունքները: Մէկ խօսքով, կը փեսենք, որ առանց հանդուրժողականութեան ջարագովման՝ չենք կրնար ապահովութիւն ունենալ»: Կամատր հրշէջները, ոսփիկանները եւ շրայա օգնութեան անձնակազմը «հերոսներ»

անուանեց ան. անոնք իրենց կեանքերը գոհեցին՝ ուրիշներուն կեանքերը ազարկու համար: Ան յիշեց նաև Միացեալ Ազգերու Կազմակերպութեան քաջարի պաշտօնակիցները, որոնք այսօր իրենց կեանքերը վրանգի կ'ենթարկեն՝ մարդասիրական օգնութիւն փութացնելու համար աֆղանցի բազմաեակազար փնտրողներու: Ան անկ-ցուց. «Նանդորտոյութեան ոգին կարեւոր է խաղաղութեան ոգիին համար: Այս սկզբունքին պաշտպան կանգնելով միայն՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մէջ մենք բոլորս պիտի կարենանք շարունակել մեր կրօնական եւ մշակութային գործը՝ ի նպաստ դրական, մարդկային եւ իրաւ նպատակներու իրագործման»:

Աղօթքի արարողութեան աւարտին՝ Կեղի ունեցաւ ընդունելութիւն:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Յանձնախումբի անդամներն էին՝ Տիմիթրիոս արքեպիսկոպոս, Ղոզշ., Կոբջ. Ռապրոթ Սթեփանոփոլոս՝ Յոյն Ուղղափառ Արքեպիսկոպոսարանէն, Ղոզշ., Կոբջ. Անթընի Տը Լուգա՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցիէն, Ղոզշ. Տ. Սիմէոն արդ. Օրապաշեան՝ Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանէն, եւ Գերշ. Տ. Միքայէլ եպիսկոպոս՝ Ղախսային Ամերիկայի Ղարի Եկեղեցոյ Արքեպիսկոպոսարանէն:

ԴԻԲԱՆ ԱՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Նոկտեմբեր 15, 2001